DOI: 10.54503/1829-4324.2025.1-367

4. ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ» 2024Թ-Ի ՀԱՆԴԵՍԸ. ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐ

Հոդվածը ստացվել է՝ 05.03.25, ուղարկվել է գրախոսման՝ 07.03.25, երաշխավորվել է տպագրության՝ 11.07.25

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ
ԲԵԼԼԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի համար ավանդույթ է դարձել «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» գիտական հանդեսների հրատարակությունը: Հանդեսում զետեղված հոդվածները վերաբերում են մակրոտնտեսական, տնտեսության իրական հատվածի, ծառայությունների ոլորտի և ժողովրդագրության, տեսության և տնտեսագիտական մտքի հարցերին, որոնք իրենց որոնումների մեջ նպատակ ունեն նպաստ բերել ազգային տնտեսության նորոգություններին:

Բնավ չանտեսելով տպագրված այլևայլ հոդվածների կարևորությունը, որոնք գերազանցապես վերաբերում են ոլորտային հարցերին, սույն հոդվածում անդրադարձ է կատարվել հանդեսի արծարծումներից մի քանիսին:

Հետազոտական մի որոշակի շերտ է ներկայացնում միգրացիայի երևույթը: Հայտնի է, որ վերջինս տեղի է ունեցել մարդկության բոլոր ժամանակներում՝ կապված հասարակության կենսագործունեության բազում ազդակների հետ՝ տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական, հարկադրական և այլն: Սակայն, միգրացիան հատկապես ուժեղացել է կապիտալիստական համաշխարհային տնտեսության ձևավորման ժամանակաշրջանում, երբ, ինչպես ասում է Ստեփան Գուլիշամբարովը, տարբեր երկրների աշխարհագրական-տնտեսական ինքնուրույնության հասկացությունը հարաբերական իմաստ ունի, և տարբեր երկրների մերձեցումը դարձել է օբյեկտիվ և անխուսափելի, որն ավելի պետք է ուժեղանա՝ տանելով ժողովուրդների տնտեսական միավորմանը[1]: Իսկ հատկապես XX դարի երկրորդ կեսից և արդի էտապում միգրացիայի աննախադեպ աճի արդյունքում խնդիրը հայտնվել է հասարակական մտքի սուր կետում: Դրանում, հատկապես այլևայլ պատճառներից զատ, առանձնահատուկ նշանակություն ունեն թվային փոխակերպության պրոցեսները, որին անդրադառնում է Շ.Պողոսյանը: «Արժանապատիվ կյանք», «կյանքի որակ» հասկացություններն արդի աշխարհի անհամաչափ դրսևորումների մեջ թվային տեխնոլոգիաները դարձրել են կարևոր

[1] Гулишамбаров Ст., 1903, Россия в мировом хозяйстве, СПб, с. 3-4.

ազդակ միգրացիոն հոսքերի համար՝ պայմանավորելով մարդկանց պոտենցիալ հնարավորություններն ու որոնումներն՝ օգտվելու քաղաքակրթության ընձեռած աշխատանքի և ապրելակերպի իրավունքներից: Միգրացիայի հոսքերի կարգավորման հարցերը հեղինակը կարևոր է դիտում Հայաստանի համար, որտեղ հատկապես Հնդկաստանից և Իրանից միգրանտները կազմում են ընդհանուր բնակչության 6,5 տոկոսը: «Պարզեցված ռեժիմով» նրանց զգալի մասը ստացել է «ինչպես բնակության, այնպես էլ միայն աշխատանքային հիմքով կացության կարգավիճակ»: Երևույթների հետագա դասավորության համար կարևոր է ներկայանում հանրապետությունում միգրացիայի քաղաքականության «բացերը» դնելու որոշակի կարգավորիչ սկզբունքների վրա՝ խուսափելու հետագա տարամետ հետևանքներից[2]:

Ա. Սարգսանը կարևոր է դիտում օգտագործելու հեռավար աշխատանքային հնարավորությունները՝ զսպելու հանրապետությունից «բարձր որակավորում ունեցող մասնագետների արտահոսքը», ինչը պահանջում է այլ երկրների փորձով իրականացնելու օրենսդրական փոփոխություններ[3]: Համապատասխան վիճակագրությունը տարբեր երկրներից «ուղեղների» և որակավորում չունեցող միգրանտների ներհոսքի և արտահոսքի վերաբերյալ, իրական պատկերացում կտար միգրացիայի արդի գործընթացների, տնտեսական, հոգևոր ու բարոյական արժեքների ձեռքբերումների ու կորուստների հաշվեկշռի վերաբերյալ: Միգրացիայի կառավարման արհեստական բանականության դերի հարցերն է դիտարկում Մ.Պողոսյանը[4]:

Ուշագրավ է ներկայանում Լ.Բեգլարյանի դիտարկումները միջազգային միգրացիայի միտումների և կարգավորման մեխանիզմների վերաբերյալ բազմաթիվ փոխառնչությունների շղթայում՝ կապված բարեկեցության, տնտեսական աճի, քաղաքական խնդիրների, իրավական նորմերի, ազգային անվտանգության, միգրանտների ինտեգրման և այլ խնդիրների հետ, ներկայացնելով տարբեր երկրների որոնումների և նոր հայտնությունների օրինակներով: Անդրադառնալով հանրապետությունում իրականացվող կարգավորման միջոցառումներին, նա նկատում է, որ «Հայաստանյան օրենսդրությունը մեկ առանձին իրավական ակտում ամփոփված չէ: Միգրացիայի տարբեր ասպեկտներով զբաղվում են մի շարք պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական և միջազգային կազմակերպություններ:

Սակայն այդ մարմինների լիազորություններն, երբեմն, համընկնում են, և

---

[2] «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում», գիրք 1, Եր., 2024, էջ 153-161 (այդ մասին հանգամանորեն տե՛ս,Կ.Աթոյան, «Բնակչության միգրացիայի կարգավորման արդի գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում», Եր., 2015, էջ 71-73):

[3]Տե՛ս, 2024, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, №1, էջ 196-211:

[4]2024, Սոցիալ-անտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, №1, էջ 211-225:

իրականացված միջոցառումները կորցնում են ակնկալվող արդյունավետությունը: Եվ հեղինակը հայրենիք վերաարտագաղթողների ներհոսքը և արտահոսքը կանխելու համար առաջարկում է.

«1. միգրացիոն ծառայությունների տրամադրումը մեկ միասնական կառույցի կողմից կապահովի միգրացիոն շղթայի բոլոր բաղադրիչների ինտեգրված կառավարումը, գնահատումը, տվյալների մշակումը, վերահսկողությունն ու հսկողությունը,

2. օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց աշխատանքի ներգրավելու համար գործատուների համար սահմանել քվոտաներ, հարկային արտոնություններ,

3. վերահսկել բնակվարձերի մակարդակը՝ հարկային օրենսդրությամբ սահմանել եկամտային հարկով չհարկվող շեմ, և բարձր դրույքաչափով հարկվող օբյեկտի շեմ,

4. նպաստել աշխատանքային միգրանտների, վերադարձողների և նրանց ընտանիքների անդամների հզորացմանը, կազմակերպել դասընթացներ բիզնեսի պատշաճ և գրագետ կառավարման համար,

5. հայրենիք վերադառնալիս հարկային օրենսդրությամբ դադարեցնել կամ սահմանափակել հարկային արտոնություններն այն միգրանտների համար, որոնք 1-2 տարի ժամկետից ավելի չեն ապրում արտասահմանում՝ խրախուսելով ժամկետում վերադառնալու որոշման կայացումը»[5]:

ՀՀ սոցիալ-տնտեսական պատկերի համատեքստում Գ.Մարտիրոսյանը ևս առաջարկում է ուժեղացնել միգրացիոն գործընթացների վերահսկողությունը և աշխատանքի շուկան համալրել հայ ազգաբնակչության հաշվին[6]:

Մի բան ակներև է՝ միգրանտական հոսքերի կառավարումը հանրապետությունում պահանջում են նորոգություններ: Եվ եթե ընդհանրացնելու լինենք վերը նշված դիտողությունները, դրանք հանգում են՝ ինչ չանելը միգրացիոն քաղաքականության մեջ ոչ պակաս կարևոր է, քան իմանալ ինչ անելը:

* *
*

Հաճախ միգրացիան պայմանավորող հիմնական գործոն է դիտվում շատ փող վաստակելու» կամ էլ առաջադրվում տնտեսական աճի խնդիրը: Մինչդեռ միգրացիան իր հետևանքներով չի հանգում լոկ տնտեսական վնասի կամ օգուտի թվաբանությանը: Դրանից արդեն գոյություն ունեն հարաբերությունների բազմաթիվ չուսումնասիրված շերտեր: Ինչպես նկատում է Լ.Բեգլարյանը «միգրացիոն գործընթացներում ընդգրկված տղամարդկանց երկարատև բացակայության պատճառով աղավաղվում են ընտանեկան հարաբերությունները, կրճատվում ամուսնությունների թիվը, աճում ամուսնալուծությունները, անկում է նկատվում երեխաների դաստիարակության ու նրանց սոցիալականացման

[5] 2024, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում», № 2, 353:
[6] Նույն տեղում, էջ 334-335:

մակարդակում: Մտավոր ներուժի արտահոսքը սպառնում է երկրի ազգային անվտանգությանը, միգրացիոն շարժը շարունակում է մնալ երկրում հետագա էմիգրացիայի խթան, իսկ էմիգրանտների կյանքի պայմաններն ու աշխատանքային գործընթացը լի են սպառնալիքներով ու ռիսկերով»[7]:

Դասական կապիտալիզմի դասական երկրները և ազգերը փոխում են իրենց կերպը: Դա էթնիկական կազմի, մշակույթի, ավանդույթների, հավատամքի և այլ արժեքների փոփոխություն է: Հին աշխարհի մայրաքաղաքներն արագ կերպարանափոխվում են: Արդեն մի քանի տարի առաջ, Լոնդոնում գործում էին 423 մզկիթներ, իսկ ավելի քան 500 քրիստոնեական եկեղեցիներ փակվել էին: Փարիզում յուրաքանչյուր էթնիկ ֆրանսիական ընտանիքում ծնվում է մեկ երեխա, իսկ մուսուլմանական ընտանիքում՝ հինգ: Պատկերը, թերևս, ավելի սուր է Գերմանիայում և եվրոպական այլ երկրներում[8]:

Զարգացած երկրները հսկայական միջոցներ և ինտելեկտուալ ուժեր են ուղղում աղքատ երկրներից ընդունած միգրանտներին իրենց սոցիումում ինտեգրելու համար: Եվ որքան էլ ատոմիստական տեսությունը փորձում է «ժխտել անհատի հոգևոր ձևավորման պատմական հետագիծը», միևնույն է նա մնում է կառչած իր պատմությանը, իր ռեֆլեքսներին, այնուամենայնիվ, Եվրոպայի երկրներում ձևավորվում է «զուգահեռ հասարակություն», որը վտանգ է ներկայացնում արևմտյան արժեքների համար (եթե ինչ-որ բան մնացել է -Ռ.Ս.): Միգրանտներն իրենց հետ բերում են նոր բարքեր, սովորություններ և նոր գեներ: Ինչպես նկատում է իտալացի պրոֆեսոր Պյերո Պրինին «մեր դարաշրջանի էության արտահայտիչը ավելի շուտ հանդիսանում է քոչվորը՝ մարդը, որը թափառում է մի վայրից մյուսը և, որ ապագա հասարակության մեջ բոլոր մարդիկ, անկախ իրենց մշակույթից, պետք է գաղթեն[9]: Գլոբալացումը «ազգերի խառնարան է»: «Այն, ինչ կոչվում է գլոբալիզացիա, համաշխարհային հրեշ է,- նկատում է Ս.Սարինյանը,- որով աշխարհի ուժեղները ձգտում են խժռել փոքր ազգություններն ու էթնիկական կազմավորումները, ստեղծել զորշ, միագույն, միասեռ, միակենտրոն ունիվերսալիա: Հոգևոր ագրեսիան, որ քաղաքական ագրեսիայի նախերգանքն է, գործում է բոլոր ուղղություններով՝ լեզու, կրոն, եկեղեցի, մշակույթ, սոցիալական կենցաղավարություն և այլն: Տրոհել, կազմալուծել, ձևախեղել ազգային միավորները: Ստեղծել անազգ պետություն կամ անպետություն ազգ»[10]:

Ուշագրավ եմ դիտում ներկայացնելու Գևորգ Պողոսյանի դիտողությունները՝ Վրաստանում կատարվող ժողովրդագրական փոփոխությունների վերաբերյալ: Երկիրը գտնվում է «սոցիալական ստագնացիայի» վիճակում: Ընտանիքների բաժանությունները գերազանցում են ամուսնություն-

---

[7]2024, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, №2,էջ 310-311:
8 Այդ մեսին հանգամանորեն տե՛ս, 15 февраля 2018г.Аргументы недели», №6,
[9] Տե՛ս, 1999, Буданова В., Международная миграция населения: теория и история изучения, Выпуск 3, Москва, Диалог МГУ, с. 76.
[10] 2004թ. «Առաքյալ», 10 նոյեմբերի,:

ները: 2021-ին Վրաստանի 120 դպրոցներում չեն եղել առաջին դասարանցիներ: Վրացական ժողովրդագիրների կարծիքով՝ 5-10 տարի հետո երկրում էթնիկ վրացիներն ավելի քիչ են լինելու, քան թուրքերը, արաբները և պակիստանցիները: Միգրացիայի արդյունքում պակասել է նաև հայերի թիվը՝ 1989թ. 437.211-ից 2002-ին իջնելով 248.929 մարդու: Սրընթաց աճում է թուրքերի թիվը: Վրաստանի շատ քաղաքներում առաջացել են թուրքական թաղամասեր: Մեծ տարածում է ստացել թուրքերեն լեզուն: Երկրում գործում են հազարավոր թուրքական ֆիրմաներ: Ընդլայնվում են թուրքերի և ադրբեջանցիների ազդեցության ոլորտները: Ստացվում է, որ «վրացիները ձգտել են դեպի Եվրոպա, սակայն հայտնվել են Թուրքիայում»:

Գ.Պողոսյանի վիճակագրական և տեղեկատվական այլևայլ փաստերը Վրաստանի վերաբերյալ, որոշակի իմացաբանական արժեք են թելադրում Հայաստանի այսպես կոչված արևմտամետերի համար՝ թռչելու պատմական հիշողության վրայով և գրեթե «եղբայրանալու» թուրքերի և ադրբեջանցիների հետ: Մինչդեռ, այդ «լավատեսներին» արժե հիշեցնել, որ համաձայն Թուրքիայում անցկացված հասարակական կարծիքի, թշնամական երկրների ցանկը գլխավորում է Հայաստանը (հարցում արվածների 60.9 տոկոսը)[11]:

Առանց սահմաններ գծելու ժամանակների հոլովույթում միգրանտներն ավելի շուտ կինտեգրեն հանրապետությունը՝ արդեն վտանգված մեր ինքնության պահպանումը: Չդիմելով վիճակագրական տվյալներին, նույնիսկ տեսանելի մակարդակով, փոխվում է հանրապետության ժողովրդագրական պեյժազը:

* *
*

Հարցի պատմության միջանկյալ դիտարկում:

Ինչպես հայտնի է, XIX դարավերջին՝ կապված Անդրկովկասի կապիտալիստական փոխակերպության, դրամատիրական հարաբերությունների զարգացման հետ, գյուղական համայնքի անդամներն աշխատանքի համապատասխան կիրառում չգտնելով, դիմում էին տարագնացության՝ աշխատանքի ու ապրուստի միջոցներ փնտրելու երկրամասի արդյունաբերական կենտրոններում կամ նրա սահմաններից դուրս: Գրիգոր Արծրունին բացասական վերաբերմունք ուներ այս իրողության հանդեպ և առաջարկում էր բոլոր հնարավոր միջոցներով խափանել գյուղից քաղաք բնակչության հոսքը, որը ենթադրում էր ազգի կազմալուծում: Արասխանյանը, ընդհակառակը, այն կարծիքին էր, որ ամեն մի երկիր, որն ապրում է զարգացած տնտեսական կյանքով, տարագնացությունը պետք է դիտվի իբրև բնապատմական երևույթ: Այն կապելով հայկական համայնքի տնտեսական թույլ զարգացման հետ՝ ելնելով արդի պահպանության հայեցությունից, կարևորում էր, որ այն չտարածվի «մեր երկրի սահմաններից դուրս և որքան կարելի է կենտրոնանա մեր մեջ եղած քաղաքներում»[12]: Տնտեսագետի կարծիքով ազգի քանակությունը, աճը վկայում է

[11] мая 2022г.Голос Армения, 1-24

[12] 1890 «Մուրճ», №8, էջ 795:

նրա կենսունակության և հարատևության մասին, հաճախ պայմանավորում ընդհանուր հանրության մեջ նրա դիրքը: Այդ է վկայում ազգերի ընդհանուր պատմությունը. «Ինչ մեծ ընդունակությունների տեր են թուրքերը: Համեմատապես փոքր: Որ քաղաքակրթությանը նրանք ավելի քիչ են հարում, քան մեր քրիստոնյա ազգերը, այդ մի նորություն չէ: Բայց այդ նվազ կուլտուրական ազգը իր խոշորությամբ... պահպանում է իրեն իբր մի ուժ...

Մեծ քանակությամբ մի տեղ դարսած սառույցները դիմանում են նաև տաք օրերին, մինչդեռ մի փոքրիկ կտորը ձեռաց հալչում է: Որովհետև մեծ քանակությամբ սառույցները միասին առած ստեղծում են իրենց շուրջը մի սառցային մթնոլորտ, որի մեջ սառույցը կարող է դիմանալ: Մի կտոր սառույցը մթնոլորտ չի ստեղծում:

Որպեսզի ծառերը կարողանան ստեղծել պուրակի կամ անտառի մթնոլորտ, պահանջվում է, որ դրանք որոշ քանակությունից պակաս չլինեն: Ազգերի համար պահանջվում է նույնը, այստեղ պահանջվում է, որ մի ազգ թվով ավելի պակաս չլինի, քան այն հարկավոր է ներքին կյանք ստեղծելու, պահպանելու համար»[13]:

Արասխանյանը սրանում է տեսնում հայ ազգային համախմբության պահվածքը՝ կարևորելով, որ հայ հասարակության գիտակցության մեջ մարմնավորվի «ազգաբնակչության աճի բարձր գաղափարը»:

Արասխանյանի դիտողությունները ոչ պակաս հնչեղություն ունեն նաև այսօրվա համար, երբ վերջին տասնամյակներին հանրապետությունից մեկնողների և ժամանողների հաշվեկշիռը ցուցադրում է բացասական միտում, ինչը ենթադրում է, որ միգրացիայի հոսքերի կարգավորումը հանրապետությունում պիտի կառուցել ելակետ ունենալով ազգային արժեքների պահպանության կշռույթը:

2.Այն, որ գինը շուկայական հարաբերությունների երևույթ է, վաղուց տնտեսագիտության աքսիոմատիկ ճշմարտություններից է: Պ.Սամուելսոնը վկայակոչում է անհայտ մի հեղինակի այն խոսքերը, թե «թութակին կարելի է դարձնել կրթված տնտեսագետ, այն, ինչ նա պետք է սովորի երկու բառ է՝ առաջարկ և պահանջարկ»[14]: Դրանք այն ուժերն են, այն լծակները, որոնք որոշում են ապրանքների գինը և քանակը, ռեսուրսների և եկամուտների վերաբաշխումը, կարգավորում ամբողջ տնտեսական ու սոցիալական համակարգը: Ըստ էության հասարակության ամբողջ էվոլյուցիան ընթացել է պահանջարկի և առաջարկի ազդեցության ներքո: Բազում-բազում աշխատություններ են գրվել գնի ձևավորման, տնտեսական ու սոցիալական ֆունկցիաների վերաբերյալ՝ որպես համակարգի հավասարակշռությունը և հարատևությունը պայմանավորող գործոնի: Լյուդվիգ Միզեսը հենց այդ անգիտությամբ է բացատրում գինը պետության միջամտությամբ կարգավորելու նկրտումների արդյունքում անտիկ քաղաքակրթության կործանումը. «Անտիկ զարմանալի քաղաքակրթությունը

[13] 1890, «Մուրճ», №5, էջ 637-638:

[14] 1954, П.Самуэльсон, Экономика, М., с.74.

կործանվել է այն պատճառով, որ իր բարոյական նորմերը և օրենսդրությունը չի ադապտացրել շուկայական տնտեսության պահանջներին:...Հռոմեական կայսրությունը քայքայվել ու քանդվել է, քանի որ նրան պակասում էր լիբերալիզմի ու ազատ ձեռնարկատիրական ոգին: Ինտերվենցիոնիզմի քաղաքականությունը և դրա քաղաքական հետևանքը՝ առաջնորդության (вождизм) սկզբունքը, քայքայել են հզորագույն կայսրությունը ճիշտ այնպես, ինչպես որ դրանք անխուսափելի են քայքայել և ոչնչացրել են ցանկացած սոցիալական ընդհանրություն»[15]: Սակայն այստեղ, իսկ կարևոր է ներկայանում գների սոցիալական ֆունկցիայի հարցում նրա կողմից առաջադրվող այն դրույթը, թե գնողունակության և կյանքի արժեքի վերաբերյալ վիճակագրական ինդեքսների հաշվարկներն ավելին չեն, քան կատարված փոփոխությունների կոպիտ ու ոչ հավաստի նկարագրությունը:

«Խելամիտ տնային տնտեսուհին գիտի ավելին, թե գների փոփոխությունն ինչպես է ազդում իր տնտեսության վրա, քան կարող է ասել միջին վիճակագրությունը: Եթե նա ուղեցույց ընդունելով երկու կամ երեք ապրանքներ, «չափում» է թանկացումը, նրա մոտեցումը կլինի ոչ պակաս «գիտական» և ոչ ավելին՝ քան կամայական, կամ թե շուկայական տեղեկատվության մանիպուլյացիաներով հմուտ մաթեմատիկոսների հնարամիտ մեթոդներով մոտեցումը:

Պրակտիկ կյանքում ոչ ոք թույլ չի տա իրեն հիմարացնել այդ ինդեքսների միջոցով»[16]: Ինչ-ինչ ճշմարտություններ գուցե և առկա են տնտեսագետի դիտողություններում: Ի վերջո՝ ամեն ինչ պայմանական է: Սակայն, իրողություն է, որ ինդեքսային հաշվարկները դարձել են տնտեսագիտության ժամանակակից բաղկացուցիչը, որը, ինչպես նկատում է Գ.Վարդանյանը, հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու երկրի մակրոտնտեսական իրավիճակի մասին, «կատարելու վերլուծություններ, կարգավորում, կանխատեսումներ և մշակելու առաջարկություններ»[17]:

Ինդեքսների միջոցով հետազոտական փորձն էլ ունի իր պատմությունը: Հեղինակն ինդեքսների առաջին մշակումները հատկացնում է XVIII դարի սկզբներից սկսած, սակայն նրա թելերը նշմարելի են Եգիպտոսում դեռևս հինգ հազար տարի առաջ, որտեղ գրանցվել են առանձին ապրանքատեսակների գները և դրանց անհատական ինդեքսները:

Ֆրեդերիկ Բաստիան նկատում է, որ լավ և վատ տնտեսագետների միջև տարբերությունն այն է, որ մեկը կառչում է միայն հետևանքին, որը տեսանելի է, «իսկ մյուսը նկատի ունի և մեկը, որը տեսանելի է, և բոլոր այն հետևանքները, որոնք պետք է կանխատեսել: Գ.Վարդանյանի «Ինդեքսային մեթոդով սպառողական շուկայում պարենային ապրանքների միջին տարեկան գների մակարդակի և դինամիկայի ուսումնասիրությունը» պատկերացում է տալիս

---

[15] 2005, Людвиг Мизес, Человеческая деятельность, трактат по экономической теории, Челябинск, с. 721.

[16] Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, №1, էջ 210-211:

[17] Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, №1, էջ 97:

2018-2020թթ. պարենային հիմնական ապրանքատեսակների գների շարժընթացի մասին: Ինչ է փաստում վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը.

• «ՀՀ-ում 2022թ.-ին 2018թ.-ի համեմատությամբ հիմնական պարենային ապրանքների բոլոր տեսակների գծով արձանագրվել է գների աննախադեպ աճ (բացառությամբ երկու ապրանքատեսակի-Ռ.Ս.),

• Երևանում պարենային ապրանքների գները գերազանցում են ԱՊՀ երկրների բոլոր մայրաքաղաքների նույնանուն ապրանքների միջին գներին,

• պետական վիճակագրության կողմից նախատեսվում է գների վիճակագրության հեռանկարային կատարելագործում: Վերջինս նախ՝ պահանջում է առաջին հերթին «ժամանակակից պայմաններում գների փոփոխությունների միտումներն ու առանձնահատկությունների օբյեկտիվ արտացոլումը բնութագրող ցուցանիշների համակարգի կառուցում՝ ապա համաշխարհային պրակտիկայում ընդունված գների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման սկզբունքորեն նոր ցուցանիշների մշակում»[18]:

Կատարված վերլուծությունները կառուցված են փաստերի վրա և կարելի է այլ եզրակացությունները որոշ չափով թողնել փակագծերի մեջ:

3.Կար ժամանակ, երբ թվում էր, թե որոշարկված են տնտեսական աճի հետ կապված հարցերը, հստակեցված այն պայմանավորող գործոնների շրջանակները, որը բովանդակային հավասարություն էր գծում տնտեսական աճ-զարգացում հասկացությունների միջև: Իսկ արդեն անցյալ դարի 70-ական թվականներին, ոչ առանց հիմքի մի հոռետեսական «գլոբալ աղետ» էին կանխագուշակում հռոմեական ակումբի ներկայացուցիչները՝ կապված արդյունաբերության տեմպերով պայմանավորված հումքային ռեսուրսների ծավալների արագ աճի և աճող բնակչության աճող պահանջմունքների հետ: Դիպուկ արված այն դատողությունը, թե «Աշխարհը բավականաչափ մեծ է ցանկացած մարդու կարիքները բավարարելու համար, բայց չափազանց փոքր է, որ բավարարի մարդկային ագահությունը» (Մահատմա Գանդի), կարծես անհրաժեշտություն է դարձրել անցումը տնտեսության «զրոյական աճի» մոդելին:

Ոչ իրատեսական այդ գաղափարին պիտի հաջորդեր տնտեսական աճի իրատեսական հայացքը՝ փորձելով տնտեսական առաջընթացը կառուցել «կայուն զարգացման» տեսության պոստուլատներին համապատասխան[19]: Վերջինս ծայր տվեց «կանաչ տնտեսության» տեսությանը: Այն՝ իր հարցադրումների մեջ, հաճախ կապվում է Դ.Մեդոուզի անվան հետ, որն ասում էր, եթե չհաղթահարվի համաշխարհային քաղաքակրթության աճի ներկա ձևավորված կարծրատիպը, ապա մոտակա հարյուրամյակում մեծ է ամբողջ օրգանական աշխարհին, ներառյալ մարդուն, սպառնացող էկոլոգիական կոլապսի հավանականությունը: Սակայն «կանաչ տնտեսություն» հասկացությունը ավելի ուշ շրջանառության

[18] Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմախնդիրները ՀՀ-ում, №1, էջ 96-97:

[19] Կայուն զարգացման մասին հանգամանորեն տե՛ս, Ս. Ա.Մկրտչյան, «Տնտեսական աճ. կայուն զարգացում» աշխատությունը, Եր., 2013, էջ 5-27:

մեջ է դրել անգլիացի փիլիսոփա Դանիել Պիրսը:

Խնդիրը դարձել է հասարակագիտության հաճախակի արծարծվող հիմնախնդիրներից մեկը, որը, ինչպես նկատում է Մ.Մանուչարյանը, ակնկալում է «ոչ միայն որպես «բնապահպանական հրամայական, այլև աշխատատեղերի ստեղծման և սոցիալական առաջընթացի կատալիզատոր: «Կանաչ տնտեսությունը» իր սոցիալական փիլիսոփայության հեռագրության շրջագծերի մեջ ենթադրում է և՛ զբաղվածության ապահովում, և՛ նոր աշխատատեղերի ստեղծում, և՛ պետական կառավարման կատարելագործում, և՛ հավասարության ու արդարության ապահովում երկրների ու սերունդների միջև հարաբերություններում, կյանքի որակի ապահովում, և՛ առողջություն, և՛ կրթություն, և՛ աշխատուժի զարգացում, և՛ այլն»[20]: Հեղինակը վկայակոչում է կանաչ տնտեսության բնագավառում Գերմանիայի, Կոստա Ռիկայի, Հարավային Կորեայի փորձը: Կարելի է ենթադրել, որ առկա է տնտեսության նոր փոխաձևության սկիզբ, որն արժեքների մեջ գրավիչ է ներկայանում իր գոնե որպես համամարդկային գաղափարի: Ինչ խոսք, կանաչ տնտեսության իրականացումը երկար ժամանակ է պահանջում: Մ.Մանուչարյանը վկայակոչում է տվյալներ, որոնք կարծես խորհրդանշում են կանաչ տնտեսության ապագայի գրավականը: Այսպես.

- ըստ ՄԱԿ-ի զեկույցի՝ էներգաարդյունավետ տեխնոլոգիաների մեջ ներդրումները մինչև 2030թ. կարող են ապահովել համաշխարհային ՀՆԱ-ի տարեկան 1,1 տոկոս աճ,
- վերականգնվող էներգիայի ոլորտում ներդրած յուրաքանչյուր միլիոն դոլարը երկու անգամ ավելի շատ աշխատատեղ է ստեղծում, քան հանածովառելիքների ոլորտում,
- օրգանական և կայուն գյուղատնտեսությունը կարող է ավելացնել ֆերմերների եկամուտները 30-40 տոկոսով և այլն:

Ինչ խոսք, շատ են կանաչ տնտեսություն-սոցիալական ուղղությունների շերտերը: Մ.Մանուչարյանն ավելի շատ կենտրոնացել է աշխատատեղերի հետ ունեցած կապին՝ ըստ ոլորտների (վերականգնվող էներգիա, էներգաարդյունավետություն, թափոնների կառավարում) ու տարածաշրջանների (ԵՄ, ԱՄՆ, Չինաստան), փաստարկներով՝ ցույց տալով, որ աշխատատեղերի աճի՝ իր այլ հետևանքների մեջ կանաչ տնտեսության ֆունկցիան՝ անվիճելի է:

Սույն թեմատիկային է վերաբերում Ա.Մատինյանի, Լ.Խաչատրյանի և Է.Քոչարյանի «Կանաչ քիմիայի զարգացման հեռանկարները» ուսումնասիրությունը: Չանդրադառնալով կանաչ քիմիայի սկզբունքների ու հեռանկարի տեսաբանությանը, հեղինակներն արձանագրում են, որ «ներկայիս գյուղատնտեսական գործունեությունը դեռևս հիմնված է արտադրության ինտենսիվ վարման մեթոդների վրա՝ օգտագործելով «կանաչ հեղափոխության» ընթացքում մշակված անկայուն տեխնոլոգիաները», ինչը վկայում է դրա «անարդյունավետության» մասին: Այս իմաստով ուշագրավ դիտարկումներ են

---

[20] Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, №1, էջ 78-84:

կատարվում ՀՀ–ի վերաբերյալ, որի տարածքի շուրջ 80 տոկոսը ենթարկված է տարբեր աստիճանների անապատացման, իսկ վտանգավոր արտանետումների ծավալները մեծ շեղումներ է հայտնաբերում թույլատրելի սանդղակների համեմատությամբ: Խնդրի առաջադրման շրջանակներում կարևորվում է հանրապետության գյուղատնտեսության ուղղորդումը դեպի օրգանական գյուղատնտեսություն և ներկայացվում ՀՀ ԳԱԱ Հայկենսատեխնոլոգիա գկ և կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գկ առաջարկություններն ու կատարվող մշակումները[21]:

4. Հայտնի է, որ XVIII դարում սկսվում է հոգեբանության առանձնացումը՝ որպես գիտության առանձին բնագավառի, և արդեն XIX դարի երկրորդ կեսին և, հատկապես, ԴՄ դարի սկզբներին՝ կապված փորձառական հոգեբանության առաջացման հետ, սկսվում է այդ գիտության տարեգրությունը: Ի հայտ է գալիս հոգեբանական դպրոցը սոցիոլոգիայում, որը հասարակական երևույթների հիմքում դնում էր անհատի կամ մարդկանց առանձին խմբերի ու կոլեկտիվների հոգեբանական գործոնները, փորձառական և դիֆերենցիալ հոգեբանության ձեռքբերումները սկսում են օգտագործվել էկոնոմիկայում և արդյունաբերության մեջ[22]: Իսկ արդեն անցյալ դարի 70-ական թվականներին սկզբնավորվում է վարքագծային տնտեսագիտությունը, որի ժամանակակից զարգացումներին է անդրադառնում Լ. Խաչատրյանը:

Անցած ավելի քան երկու հարյուրամյակների ընթացքում տնտեսագիտության մեջ գերիշխող է հանդիսացել դասականների կողմից առաջադրված այն մոդելը, որտեղ բանական մարդը փոխարինվել է մտացածին մարդով՝ նրա պահվածքը բացատրելով պահանջարկի և առաջարկի կոդերի տարերային տարուբերումներով: Դասականների դրույթները ներկայացնում էին որպես աքսիոմատիկ: Դրանք ենթակա չէին քննադատության: Մարդիկ պետք է ճանաչեին առաջադրած տնտեսական օրենքները և առաջնորդվեին դրանցով: Ջ.Ստյուարտ Միլի պատկերավոր բնութագրությամբ, ինչպես որ մարդը լուծելով հայտնի թվով հանրահաշվական հավասարումները, կարող է առանց դժվարության լուծել նույն շարքի մնացած բոլոր հավասարումները, այնպես էլ Անգլիայի կամ Յոկչիրի

---

[21] Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, №2, էջ 142-157:

* Ինչ խոսք, կանաչ տնտեսության դոկտրինայի վերաբերյալ բանաձևումներն իրենց նպատակների մեջ պարզ են և միանգամայն հրապուրիչ: Սակայն գրականության մեջ հաճախ նշվում են պլանետար առումով չլուծվող խնդիրներ, որոնք դրդում են ամբողջ աշխարհի բնակչության համար բարեկեցիկ կյանք ապահովելու հոռետեսական մտորումների, թե դրանում «որքան են մանիպուլյացիաները և որքան ճշմարտությունները», կամ, թե այն «ժամանակի տրենդն է, թե մրցակցային պայքարի գործիքը, թե հերթական ուտոպիական ծրագիրը»: Նույնիսկ ամենալավագույն հեռադրության մեջ, ինչպես ասում է 18-րդ դարի ֆրանսիացի մտածող Լենգեն, բոլոր մարդկանց երջանիկ դարձնելու ցանկությունը նույնպիսի սխալ է, ինչպիսին քիմիայում փիլիսոփայության քարը փնտրելը:

[22] Տե՛ս, 1976, Ярошевский М.Г., История психологии, М., с. 298.

քաղաքատնտեսությունն իմացողը գիտի նաև բոլոր ժողովուրդների քաղաքատնտեսությունը[23]: Մինչդեռ, ֆիզիկայից հայտնի է, որ անօդ տարածության մեջ բոլոր մարմինները ընկնում են հավասարաչափ արագությամբ, իսկ օդի առկայության դեպքում փոխվում է ոչ միայն առարկաների արագությունը, այլև շատ ֆիզիկական երևույթներ: Նույն զուգահեռով, ինչպես հեղինակը վկայակոչում է Ռ.Թեյլերին, մարդու պահվածքը նույնացվում էր բնական գիտությունների օրենքների չափանիշներին «առանց հաշվի առնելու «մարդու» գործոնը, որը, ինչպես օդը, փոխում է բոլոր արդյունքները»[24]: Այստեղ է, որ վարքագծային տնտեսագիտությունը հայտ ունի մարդու տնտեսական պահվածքի ընթերցումն իրականացնել տնտեսագիտության և հոգեբանական ազդակների միասնության մեջ ամբողջական մարդու տեսանկյունից. «մարդու վարքը,- նկատում է Լ.Խաչատրյանը, - տնտեսական որոշումների իռացիոնալ համակարգված մոտեցումը սոցիալական նախասիրությունների, էվրիստիկայի և հասարակության նորմերի ոսպնյակի միջոցով, հիմնված է այն գաղափարի վրա, որ մարդու վարքագիծը հաճախ առաջնորդվում է ոչ ռացիոնալ շարժառիթներով»[25]:

Վարքագծային տնտեսագիտության որոշակի տարրեր առկա էին ինչպես Սմիթի, այնպես էլ հետսմիթյան ժամանակաշրջանի առանձին ներկայացուցիչների աշխատություններում, սակայն դպրոցի սկզբնավորումը կապված է Դանիել Կահնեմանի և Ամոս Տվերսկու հետ: Նրանց «Դատողություններ անորոշության պայմաններում: Էվրիստիկա և նախապաշարմունք» (1974) աշխատության մեջ, ըստ էության ուրվագծվում է մարդու պահվածքի իռացիոնալությունը պայմանավորող ներկայացուցչական, հասանելիության և խարսխման ու ճշգրտման երեք հիմնական բացահայտումները, երբ այս կամ այն օբյեկտի վերաբերյալ դատողություններ են արվում՝ դրանց նմանեցնելով արդեն հայտնի օբյեկտներին, ցուցաբերում են հիշողության վրա հիմնված կողմնակալ վերաբերմունք, կամ էլ պարզ հաշվարկներով ու կամայականությամբ ընտրում են որևէ տարբերակ:

Տնտեսագիտության մեջ մի կարծիք էր շրջանառվում, թե ի տարբերություն բնական գիտությունների, փորձարարական մեթոդն անընդունելի է տնտեսագիտության համար: Որպես թե տնտեսական այս կամ այն երևույթի բացատրության ժամանակ ելակետ ընդունելով հոգեբանական գործոնը, ճանաչողական առումով շատ բան չի տալիս, ինչպես օրինակ Բերնուլիի մաթեմատիկական հենքի վրա կառուցված այն տեսությունը, թե մարդու հարստության աճի հետ նվազում է նրա բավարարվածության աճը, կամ Գոսսենի սահմանային օգտակարության և նվազող սահմանային օգտակարության մասին օրենքը, կամ Ջոն Նեյմանի և Օսկար Մորգենշտերնի օգտակարության տեսությունը, որը

[23] Տե՛ս, 1906, Железнов В., Очерки политической экономики, М., с. 60.

[24] Տե՛ս, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, 2024, №2, էջ 407:

[25] Նույն տեղում, էջ 407-408:

կիրառելի է նաև «անորոշության պայմաններում ցանկացած որոշումների ընդունման դեպքում» կամ Սայմոնի ռացիոնալ որոշումներ կայացնելու «ճանաչողական սահմանների» ընդլայնման անհրաժեշտությունը և այլն: Մինչդեռ վարքագծային տնտեսագիտությունը, որը մտավոր թելեր է ենթադրում նշված տեսությունների հետ, փոխակերպում է ինչպես երևույթների հետազոտական, այնպես էլ մեթոդաբանական մոտեցումների պատկերացումները: Լ.Խաչատրյանը, հատկապես առանձնացնում է Ռ.Թեյլերին, որի աշխատությունները հարուստ են տնտեսների «շեղումների» ենթադրող օրինակներով, որոնք կարող են մղել նոր լուծումների: Հոդվածում կարևոր են դիտարկումները վարքագծային տնտեսագիտության նոր զարգացումների և հասարակական կազմակերպություններում նրա կիրառական սահմանների վերաբերյալ: Կիրառական կենսագրության ընդգրկումների առումով ուշագրավ է ներկայանում Մեծ Բրիտանիայի կառավարությանն առընթեր գործող «Վարքագծային պատկերացումների թիմի» գործունեությունը, որը նպատակ ունի խորհուրդներ տալ կառավարությանը բավարարելու հանրային քաղաքականությունը՝ կապված սպառողների և ֆինանսների, հանցագործության, արդարության և անվտանգության, կրթական, շրջակա միջավայրի պահպանման, առողջության, տեղական կառավարման, հարկային և սոցիալական ապահովության, աշխատանքի կազմակերպման, այլ և այլ ոլորտների վերաբերյալ*:

Հարցերի իմացաբանական առումով վարքագծային տնտեսագիտությունը, փաստահավաքության մեջ նպատակ ունի ընդլայնել «սահմանափակ տեսադաշտի գործոնը» և մղել նոր նորոգությունների: Այս իմաստով Լ.Խաչատրյանը առաջարկում է ՀՀ կառավարությանն առընթեր ձևավորել վարքագծային տնտեսագետներից բաղկացած թիմ, ինչը կնպաստի առաջարկվող ծրագրերի արդյունավետությանը և նպատակային ներդրմանը: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ ազգարային ոլորտին, որտեղ տարբեր ուղղություններով իրականացվող ծրագրերը կարող են անհատների խայտաբղետ վարքագծերը ուղղորդել նպատակային և արդյունավետ լուծումների[26]: Լ.Խաչատրյանը դրանում է տեսնում հոդվածում արծարծվող մտորումների հայտը:

---

* Տնտեսության վարքագծային մոդելը էմպիրիկ հետազոտական արդյունքներում օգտագործվում է Ավստրալիայում, Կանադայում, Ֆրանսիայում, Նիդեռլանդներում և շատ այլ երկրներում:

[26]2024, Future of Science: innovations and perspectives, proceedings of I International scientific and practical conference, November 20-27, p.652

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աթոյան Կ., Եր., 2015, «Բնակչության միգրացիայի կարգավորման արդի գերակայությունները Հայաստանի Հանրապետությունում», էջ 71-73) 1890,№ «Մուրճ», 8, էջ 795:
2. 2004թ.: «Առաքյալ», 10 նոյեմբերի,
3. Մկրտչյան Ս.Ա., Եր., 2013, «Տնտեսական աճ. կայուն զարգացում» էջ 5-27:
4. 1890, «Մուրճ», №5, էջ 637-638:
5. Եր., 2024: «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում», գիրք 1,
6. Եր., 2024: «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում», գիրք 2,
7. февраля 2018г.Аргументы недели», №6, 15
8. Буданова В., 1999.Международная миграция населения: теория и история изучения, Выпуск 3, Москва, Диалог МГУ,
9. Голос Армения, 1-24 мая 2022г.
10. Железнов В., 1906 г., Очерки политической экономики, М., Future of Science: innovations and perspectives, proceedings of I International scientific and practical conference, November 20-27, 2024 г..
11. Гулишамбаров Ст., 1903г.Россия в мировом хозяйстве, СПб,
12. Людвиг Мизес, Человеческая деятельность, трактат по экономической теории, Челябинск, 2005 г.
13. Самуэльсон П., Экономика, М., 1954, г.
14. Ярошевский М.Г., История психологии, М., 1976 г.

«ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ» 2024Թ-Ի ՀԱՆԴԵՍԸ. ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐ

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ
ԲԵԼԼԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համառոտագիր

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի համար ավանդույթ է դարձել «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» գիտական հանդեսների հրատարակությունը: Հանդեսում զետեղված հոդվածները վերաբերում են մակրոտնտեսական, տնտեսության իրական հատվածի, ծառայությունների ոլորտի և ժողովրդագրության, տեսության և տնտեսագիտական մտքի հարցերին, որոնք իրենց որոնումների մեջ նպատակ ունեն նպաստ բերել ազգային տնտեսության նորոգություններին:

Բնավ չանտեսելով տպագրված այլևայլ հոդվածների կարևորությունը, որոնք գերազանցապես վերաբերում են ոլորտային հարցերին, սույն հոդվածում անդրադարձ է կատարվել հանդեսի արծարծումներից մի քանիսին: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է միգրացիոն պրոցեսների խնդիրների, ինդեքսների՝ երկրի մակրոտնտեսական իրավիճակի վերաբերյալ պատկերացումների, արդի հասարակագիտության մեջ շատ շրջանառվող «կանաչ տնտեսու-թյան» դոկտրինայի, ինչպես նաև մարդու պահվածքի տնտեսական ու հոգեբանական ազդակների մասին վարքագծային տնտեսագիտության դրույթներին: Ինչ խոսք, տնտեսագիտության շատ ու շատ, այնպես էլ նշված հարցերի վերաբերյալ չկա միակարծիքություն: Եվ այս իմաստով հոդվածի հեղինակները շարադրանքի ընթացքում առաջնորդվել են հենց այս դիտակետով:

Բանալի բառեր. գլոբալացում, միգրացիա, միգրացիոն ծառայություններ, վիճակագրական ինդեքսներ, կանաչ տնտեսություն, հոգեբանություն, վարքագծային տնտեսագիտություն, զուգահեռներ:

ЖУРНАЛ НАУЧНЫХ СТАТЬЕЙ «АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ В РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ» ЗА 2024Г: ЗАМЕТКИ

РОБЕРТ САРИНЯН
БЕЛЛА ГАБРИЕЛЯН
ЛИАНА АРУТЮНЯН

Аннотация

В институте экономики им. М.Котаняна НАН стало традицией ежегодное издание научного журнала «Актуальные проблемы социально-экономического развития Республики Армения». В нем рассматриваются вопросы макроэкономики, реального сектора экономики, сферы услуг и демографии, теории и истории экономических учений, которые в своих исканиях преследуют цель способствовать реформированию национальной экономики.

Не ущеемляя важность других статей, которые в целом относятся к отраслевым проблемам, в данном случае рассматриваются вопросы, затрагивющие современные аспекты миграционных политик, роль статических индексов в макроэкономическом регулировании цен, «зеленой экономики», а также экономические и психологические факторы в экономическом поведении человека. Как по многим, так и по этим вопросам нет единого мнения в экономической литературе. В этом случае, авторы в процессе изложения статьи руководствовались этой точкой зрения.

Ключевые слова. глобализация, миграция, миграционные услуги, статистические индексы, зеленая экономика, психология, поведенческая экономика, параллели.

REFLECTIONS ON “CONTEMPORARY ISSUES OF SOCIO-ECONOMIC DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA” 2024 EDITION

ROBERT SARINYAN
BELLA GABRIELYAN
LIANA HARUTYUNYAN

Abstract

The annual edition of the scientific journal "Current Problems of Social and Economic Development of the Republic of Armenia" has become a tradition at the Institute of Economics after M. Kotanyan of the National Academy of Sciences of RA. The articles of the journal deal with issues of macroeconomics, real sector economy, sphere of services and demography, theory and history of economic studies, which are aimed at promoting the reformation of the national economy.

Notwithstanding the importance of other articles, many of which offer valuable insights into sector-specific issues, this article focuses on several topics raised in the journal. Specifically, attention is given to challenges associated with migration processes, the use of indices in forming perceptions of a country's macroeconomic situation, the widely discussed doctrine of the “green economy” in contemporary social sciences, and the principles of behavioral economics concerning the economic and psychological drivers of human behavior. Undoubtedly, within the broader field of economics (including the aforementioned topics) there is a lack of universal consensus. In this respect, the authors of the articles have approached the discussion from this very standpoint.

Keywords: globalization, migration, migration services, statistical indicators, green economy, psychology, behavioral economics, comparative analysis.